

### **Նպատակ 13: Ձեռնարկել անհապաղ գործողություններ՝ պայթարելու կլիմայի փոփոխության և դրա ազդեցությունների դեմ**

Ներկայումս կլիմայի փոփոխությունն ազդում է յուրաքանչյուր մայրցամաքի յուրաքանչյուր երկրի վրա: Այսօր այն վնասում է ազգային տնտեսությունները, ազդում է կյանքի վրա՝ թանկ արժենալով մարդկանց, համայնքների ու երկրների համար, և վաղն էլ ավելի թանկ է արժենալու:

Մարդիկ կրում են կլիմայի փոփոխության զգալի ազդեցությունը, այդ թվում՝ եղանակային փոփոխություններ, ծովի մակարդակի բարձրացում և այլ ծայրահեղ օդերևութաբանական երևույթներ: Մարդկային գործունեության հետևանքով արտանետվող ջերմոցային գազերն արագացնում են կլիմայի փոփոխությունը, և դրանց ծավալը շարունակում է ավելանալ: Այժմ դրանք պատմության ընթացքում իրենց ամենաբարձր մակարդակին են հասել: Եթե գործողություններ չձեռնարկվեն, ապա կանխատեսվում է, որ երկրի մակերևույթի միջին ջերմաստիճանը կբարձրանա 21-րդ դարի ընթացքում, և հավանական է, որ այս դարում աճը կգերազանցի 3°C-ը, իսկ աշխարհի որոշ հատվածներում ջերմաստիճանը էլ ավելի կբարձրանա: Ամենաաղբատ և խոցելի մարդիկ ամենից շատ են կրում ազդեցությունը:

Այժմ առկա են մատչելի և ճկուն լուծումներ, որոնք հնարավորություն են տալիս երկրներին զարգացնել առավել ճկուն տնտեսություններ: Փոփոխությունների ընթացքն արագանում է, երբ ավելի շատ մարդիկ են հակվում դեպի վերականգնվող էներգիան և մի շարք այլ միջոցներ, որոնք կնվազեցնեն արտանետումներն ու կընդլայնեն հարմարվողականությանն ուղղված ջանքերը:

Կլիմայի փոփոխությունը համընդհանուր մարտահրավեր է, որը չի ճանաչում ազգային սահմաններ: Ցանկացած վայրում արտանետումներն ազդում են մարդկանց վրա ամենուր: Դա խնդիր է, որը պահանջում է միջազգային մակարդակով համակարգված լուծումներ և միջազգային համագործակցություն՝ աջակցելու զարգացող պետություններին անցնել ցածր ցածր-ածխածնային տնտեսության:

Կլիմայի փոփոխության խնդիրը լուծելու նպատակով 2015 թ. դեկտեմբերի 12-ին Փարիզում կայացած ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության խորհրդաժողովում երկրներն ընդունեցին Փարիզի համաձայնագիրը: Այն ուժի մեջ մտավ կարճ ժամանակ անց՝ 2016 թ. նոյեմբերի 4-ին: Դրանով բոլոր երկրները համաձայնել են աշխատել ջերմաստիճանի համաշխարհային աճը զսպելու ուղղությամբ՝ պահելով այն 2 աստիճան ցելսիուսի սահմաններում, և հաշվի առնելով խիստ վտանգները՝ ձգտել նվազեցնել մինչև 1,5 աստիճան: Համաձայնագրի մասին [ավելին կարող եք հմանայ այստեղ](#):

Փարիզի համաձայնագրի իրագործումը վճռորոշ նշանակություն ունի Կայուն զարգացման նպատակների իրականացման համար և ապահովում է հանուն կլիմայի գործողությունների ճանապարհային քարտեզ, որոնք կնվազեցնեն արտանետումները և կստեղծեն կլիմայական դիմակայունություն:

## **ԻՆՉՈ՞Ւ Է ԱՅՆ ԿԱՐԵՎՈՐ**

*Չաջորդ 15 տարվա ընթացքում աղետների վտանգի նվազեցմանն ուղղված 6 մլրդ ԱՄՆ դոլար ներդրումները թույլ կտան խուսափել 360 մլրդ ԱՄՆ դոլարի կորստից:*

## **Ո՞րն Է նպատակը**

Ձեռնարկել անհապաղ գործողություններ կլիմայի փոփոխության և դրա հետևանքների վերացման համար:

## **Ինչո՞ւ**

Կլիմայի փոփոխությունն առաջանում է մարդկային գործունեության հետևանքով և սպառնում է մեր կենսակերպին ու մեր մոլորակի ապագային: Լուծելով կլիմայի փոփոխության խնդիրը՝ կարող ենք ստեղծել կայուն աշխարհ յուրաքանչյուրի համար: Բայց անհրաժեշտ է գործել հիմա:

## **Իսկապե՞ս կլիմայի փոփոխությունն ազդում է մարդկանց կյանքի վրա**

Այո: Եղանակային խիստ պայմանները և ծովի բարձրացող մակարդակը ներգործում են մարդկանց եւ նրանց սեփականության վրա զարգացած և զարգացող երկրներում: Ֆիլիպիններում ապրող փոքր ֆերմերից մինչև լոնդոնյան գործարար՝ կլիմայի փոփոխությունն ազդում է բոլորի վրա, հատկապես՝ աղքատ և խոցելի մարդկանց, ինչպես նաև մեկուսացած այնպիսի խմբերի, ինչպիսիք են կանայք, երեխաները, տարեցները:

## **Ի՞նչ կպատահի քայլեր չձեռնարկելու դեպքում**

Խնդրի չլուծված մնալու դեպքում կլիմայի փոփոխությունը կշրջադարձի անցած տարիների ընթացքում զարգացմանն ուղղված առաջընթացի զգալի մասը: Ինչպես արդեն տեսանելի է, այն կարող է նաև սրել առկա սպառնալիքները, ինչպիսին է սևնդամթերքի և ջրի անբավարարությունը, ինչը կարող է հանգեցնել հակամարտության:

Ոչինչ չանելը ավելի մեծ ծախսեր կպատճառի, քան եթե ձեռնարկվեն այնպիսի գործողություններ, որոնք կհանգեցնեն ավելի շատ աշխատատեղերի ստեղծման, առավել մեծ բարգավաճման և բոլորի համար ավելի լավ կյանքի՝ միաժամանակ նվազեցնելով ջերմոցային գազերի արտանետումները և ստեղծելով կլիմայական դիմակայունություն:

### **Արդյո՞ք կարող ենք լուծել այս խնդիրը, թե՞ չափազանց ուշ է գործելու համար**

Անշուշտ, մենք կարող ենք լուծել կլիմայի փոփոխության խնդիրը, սակայն անհրաժեշտ է մեծապես ընդլայնել մեր ջանքերը: Աշխարհը պետք է փոխակերպի իր էներգետիկ, արդյունաբերական, հաղորդակցության, պարենային, գյուղատնտեսական և անտառային տնտեսության համակարգերը, որպեսզի կարողանանք ջերմաստիճանի համընդհանուր բարձրացումը զսպել 2 աստիճանի սահմաններում կամ գուցե՝ նույնիսկ 1,5 աստիճանի: Անհրաժեշտ է նաև պատրաստ լինել, հարմարվել և դիմակայուն դառնալ կլիմայի փոփոխության ներկայիս և հետագա հետևանքների նկատմամբ: 2015 թ. դեկտեմբերին աշխարհն իրականացրեց առաջին նշանակալի քայլը՝ ընդունելով Փարիզի համաձայնագիրը, որով բոլոր երկրները պարտավորվեցին քայլեր ձեռնարկել կլիմայի փոփոխության խնդիրը լուծելու համար: Շատ գործարարներ և ներդրողներ նույնպես պատրաստակամություն են հայտնում նվազեցնել արտանետումները՝ համաձայն Կլիմայի փոփոխության օրակարգի, որը նախաձեռնվեց 2014 թ. Կլիմայի վերաբերյալ Նյու Յորքի գազաթնաժողովի ժամանակ՝ միավորելու կառավարություններին, գործարարներին և քաղաքացիական հասարակությանը նոր նախաձեռնությունների շուրջ, որոնք խթանում են գործողությունները հանուն կլիմայի:

### **Ի՞նչ կարեժենա խնդրի լուծումը**

Անհրաժեշտ է մտածել ոչ թե այն մասին, թե որքան թանկ կարժենա խնդրի լուծումը, այլ այն մասին, թե որքան շատ ներդրումներ է անհրաժեշտ կատարել և ինչ ներդրումային հնարավորություններ կան կլիմայի փոփոխության խնդիրը լուծելու համար: Ընդհանուր առմամբ, մաքուր էներգիայի ոլորտում հանրային և մասնավոր հատվածների ներդրումները մինչ 2030 թ. անհրաժեշտ է հասցնել նվազագույնը տարեկան 1 տրլն ԱՄՆ դոլար և ավելի՝ ստեղծելու կլիմայական դիմակայունություն:

Սա շատ է թվում, սակայն անհրաժեշտ է հաշվի առնել, որ 2013 թ. համաշխարհային էներգետիկ առաջարկի ոլորտում արված 1,6 տրլն ԱՄՆ դոլար ներդրումների մոտ 70%-ը կապված էր հանածո վառելիքի հետ: Ավելին, մեղմացմանն ուղղված հաշվարկված ծախսերը հաշվի չեն առնում կլիմայի փոփոխության նվազեցման օգուտները: Հետագա 15 տարվա ընթացքում ընդամենը 6 մլրդ դոլար ներդրումները՝ ուղղված աղետների վտանգի նվազեցմանը, կհանգեցնեն 360 մլրդ դոլար ընդհանուր օգուտի՝ ներդրումների կենսատնողության ընթացքում խուսափած կորուստների առումով:

Սկսելով գործել՝ մենք խնայում ենք կյանքեր, գումար և խուսափում ենք մինչ օրս ձեռք բերված առաջընթացի կասեցումից:

### **Ի՞նչ կարող եմ անել այս նպատակին հասնելու համար**

Շատ բան կա, որ կարող է անհատապես անել մեզնից յուրաքանչյուրը: Պարզելու համար՝ ինչ կարող եք անել այցելե՛ք հետևյալ հղումով՝

<http://www.un.org/sustainabledevelopment/takeaction>